

040.1278.161107

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ**

1 նոյեմբերի 2007 թվականի N 1278-Ն

**ԹԵՂՈՒՏԻ ՊՐԵՍՏՍՈՒԽՐԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԾԱՀԱՉՈՐԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈՒՆԵԼՈՒ  
ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՏՐԱՄԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(1-ին մաս)**

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի երկրորդ, 13-րդ հոդվածի վեցերորդ, 48.1-ին հոդվածի վեցերորդ ու յոթերորդ եւ 76-րդ հոդվածի հինգերորդ մասերին համապատասխան եւ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի (այսուհետ՝ Թեղուտի հանքավայր) շահագործման ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականությունը հանդիսացող 146,736 հեկտար անտառային հողերը, որից՝ 97,277 հեկտար անտառներ, 49,459 հեկտար թփուտներ՝ համաձայն N 1 հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականությունը հանդիսացող 46,397 հեկտար անտառային հողերը, որից՝ 46,322 հեկտար անտառներ, 0,075 հեկտար թփուտներ՝ համաձայն N 2 հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականությունը հանդիսացող 5,368 հեկտար անտառային հողերը, որից՝ 2,843 հեկտար անտառներ, 2,525 հեկտար թփուտներ՝ համաձայն N 3 հավելվածի, փոխադրել Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականությունը հանդիսացող 17,770 հեկտար անտառային հողերը, որից՝ 17,508 հեկտար անտառներ, 0,262 հեկտար թփուտներ՝ համաձայն N 4 հավելվածի, փոխադրել Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա:

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականությունը հանդիսացող 11,643 հեկտար հողերը, այդ թվում՝ 0,575 հեկտար ջրային հողեր, 11,068 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքեր՝ համաձայն N 5 հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականությունը հանդիսացող 5,232 հեկտար հողերը, այդ թվում՝ 5,126 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝ 2,186 հեկտար վարելահողեր, 2,940 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքեր եւ 0,106 հեկտար քանակավայրերի այլ հողեր՝ համաձայն N 6 հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականությունը հանդիսացող 2,112

**ԹԵՂՈՒՄԻ ՊՐԵՍԻԴԵՆՏԻ ԿԱԿՈՒՄՍԻ ԾԱՎԱԳՈՐԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊՍԱԿՈՎ ՀՈՂԵՐԻ ՆՊՍԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (I-ԻՆ ՄԱՍ)**

հեկտար հողերը, այդ թվում՝ 1,882 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝ 0,173 հեկտար խոտհարքներ, 1,709 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքեր եւ 0,230 հեկտար բնակավայրերի այլ հողեր՝ համաձայն N 7 հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա:

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0,736 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերը, որից՝ 0,600 հեկտար վարելահողեր, 0,136 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքեր՝ համաձայն N 8 հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա:

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի գյուղական համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության "Հայանտառ" պետական ոչ առևտրային կազմակերպությանն անրացված՝ "Լալվարի անտառատնտեսություն" մասնաճյուղի Շնողի անտառապետության 259,155 հեկտար հողերն անտառային հողերի կատեգորիայից փոխադրել՝

1) 253,621 հեկտարը, որից՝ 205,203 հեկտար անտառներ, 2,005 հեկտար թփուտներ, 24,310 հեկտար արոտներ, 5,803 հեկտար խոտհարքներ, 16,300 հեկտար այլ հողեր՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ համաձայն N 9 հավելվածի.

2) 5,534 հեկտարը, որից՝ 5,429 հեկտար անտառներ, 0,105 հեկտար թփուտներ՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ համաձայն N 10 հավելվածի:

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի եւ Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում գտնվող ու սեփականության իրավունքով "Թեղուտ" փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող 231,749 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերը, այդ թվում՝ 180,282 հեկտարը՝ Շնողի գյուղական համայնքի վարչական սահմաններում, որից՝ 61,261 հեկտար վարելահողեր, 13,389 հեկտար բազմամյա տնկարկներ, 64,683 հեկտար խոտհարքներ, 5,524 հեկտար արոտավայրեր, 35,425 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքեր, 51,467 հեկտարը՝ Թեղուտի գյուղական համայնքի վարչական սահմաններում, որից՝ 12,346 հեկտար վարելահողեր, 24,166 հեկտար խոտհարքներ, 1,264 հեկտար արոտավայրեր, 13,691 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքեր՝ համաձայն NN 11 եւ 12 հավելվածների, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի եւ Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում գտնվող ու սեփականության իրավունքով "Թեղուտ" փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող 7,7 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերը, այդ թվում՝ 5,672 հեկտարը՝ Շնողի գյուղական համայնքի վարչական սահմաններում, որից՝ 2,138 հեկտար վարելահողեր, 0,725 հեկտար խոտհարքներ, 0,075 հեկտար բազմամյա տնկարկներ, 2,734 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքեր, 2,009 հեկտարը՝ Թեղուտի գյուղական համայնքի վարչական սահմաններում, որից՝ 0,667 հեկտար վարելահողեր, 0,881 հեկտար խոտհարքներ, 0,461 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքեր՝ համաձայն NN 13 եւ 14 հավելվածների, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա:

12. Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման ընթացքում բնակչության անվտանգության ապահովման ու արտադրական օբյեկտների շահագործման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական կանոնների համաձայն 756,222 հեկտար հողերի նկատմամբ սահմանել հողերի օգտագործման սահմանափակումների հատուկ իրավական ռեժիմ՝ սանիտարական գոտի, այդ թվում՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 14,188

**ԹԵՂՈՒՏԻ ՊՐԵՍՍԱՄԱԼԻԳՆԵՆՑԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀՎՈՐԾՄԱՆ ԾՐԱԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՈՍԱԿԱՎ ՀՈՂԵՐԻ ՆՈՍԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՏՐԱՄԱԳՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ (1-ԻՆ ՍԱՍ)**

հեկտար հողերի, այդ թվում՝ 13,856 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝ 4,575 հեկտար վարելահողեր, 0,938 հեկտար խոտհարքներ, 8,343 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքեր եւ 0,332 հեկտար հատուկ պահպանվող տարածքներ (պատմական եւ մշակութային հողեր)՝ համաձայն N 15 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 9,900 հեկտար հողերի, այդ թվում՝ 9,590 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝ 6,928 հեկտար վարելահողեր, 2,662 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքեր, 0,010 հեկտար բնակավայրերի այլ հողեր եւ 0,300 հեկտար հատուկ պահպանվող տարածքներ (պատմական եւ մշակութային հողեր)՝ համաձայն N 16 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող 165,255 հեկտար անտառային հողերի, որից՝ 130,959 հեկտար անտառներ, 34,296 հեկտար թփուտներ՝ համաձայն N 17 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող 177,182 հեկտար անտառային հողերի, որից՝ 175,688 հեկտար անտառներ, 1,494 հեկտար թփուտներ՝ համաձայն N 18 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի գյուղական համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության "Հայանտառ" պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված՝ "Լալ վարի անտառատնտեսություն" մասնաճյուղի Շնողի անտառապետության պետական սեփականություն հանդիսացող 389,697 հեկտար անտառային հողերի, որից՝ 384,313 հեկտար անտառներ, 1,780 հեկտար թփուտներ, 0,802 հեկտար խոտհարքներ, 2,802 հեկտար այլ հողեր՝ համաձայն N 19 հավելվածի:

13. Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 9-րդ կետերով սահմանված տարածքներում Թեղուտի հանքավայրի շահագործման աշխատանքների իրականացման ամբողջ ժամանակահատվածում թույլատրելի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծերին համապատասխան՝ շուրջ 357 հեկտար անտառային ծածկույթի հատումը:

14. Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 9-րդ կետերով սահմանված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն առանց մրցույթի՝ 50 տարի ժամկետով, հողի հարկի տարեկան դրույթաչափին հավասարեցված վճարով տրամադրել "Արմենիան Քափր Փրոգրամ" փակ բաժնետիրական ընկերությանը՝ հանքավայրի շահագործման նպատակով (բացահանքի, հարստացուցիչ ֆաբրիկայի, օժանդակ այլ կառույցների կառուցում եւ այլն) օգտագործելու համար, այդ թվում՝

1) կառուցվելիք բացահանքի տակ ընկնող 200,900 հեկտարը՝ վարձակալության իրավունքով.

2) հարստացուցիչ ֆաբրիկայի եւ օժանդակ այլ կառույցների տակ ընկնող 274,526 հեկտարը՝ կառուցապատման իրավունքով:

15. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին եւ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ "Արմենիան Քափր Փրոգրամ" փակ բաժնետիրական ընկերության ներկայացմամբ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) երկամսյա ժամկետում, ելնելով Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրից, համաձայնեցնել եւ հաստատել սույն որոշման 13-րդ կետին համապատասխան անտառային ծածկույթի հատման ժամանակացույցն ու աշխատանքների իրականացման մեխանիզմները.

2) եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ համաձայնեցնել եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատել անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագիրը՝ դրանում նախատեսվելով, մասնավորապես, ծառերի (թփուտների) հատման դիմաց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բնօգտագործման վճարները վճարելու,

**ԹԵՂՈՒՏԻ ԴՆԱՆՍՈՒԹՅԱՆ ԿՐԻՄԻՆԱԿԱՆ ԿՈՒՆԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՆՊՏԱԿՈՎ ՀՈՂԵՐԻ ՆՊՏԱԿԱՆՔԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ (1-ԻՆ ՄԱՍ)**

հատված անտառային ծածկույթին համարժեք ծառատունկ իրականացնելու եւ նոր տնկված ծառերով տարածքը պահպանելու եւ խնամելու վերաբերյալ դրույթներ:

16. Հայաստանի Հանրապետության օլոնդատնեսության նախարարին՝

1) սույն որոշման 15-րդ կետում նշված ծրագրին համապատասխան ծառատունկի իրականացման նպատակով ապահովել անհրաժեշտ տարածքների առանձնացումը՝ անհրաժեշտության դեպքում դրա վերաբերյալ առաջարկությունն ներկայացնելով Հայաստանի Հանրապետության կառավարություն:

2) անտառի հատումներից մթերված բնափայտի իրացումից գոյացած միջոցներն ուղղել անտառակառավարման պլաններով նախատեսված համալիր միջոցառումների իրականացմանը:

17. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝

1) Թեղուտի հանքավայրի շահագործման աշխատանքների իրականացման ամբողջ ժամանակահատվածում վերահսկողությունն իրականացնել սույն որոշմամբ սահմանված կարգով անտառային ծածկույթի հատման ժամանակացույցի պահպանման եւ աշխատանքների իրականացման նկատմամբ:

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողությունն իրականացնել "Արմենիան Քափըր Փրոգրամ" փակ բաժնետիրական ընկերության կողմից Թեղուտի հանքավայրի շահագործման ընթացքում իրականացված Լեռնային աշխատանքների հետեւանքով խախտված հողերի ռեկուլտիվացիայի ծրագրի կազմման եւ հաստատման, ինչպես նաեւ հաստատված ծրագրի համաձայն ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման նկատմամբ:

18. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ Թեղուտի հանքավայրի շահագործման աշխատանքների իրականացման ամբողջ ժամանակահատվածում վերահսկողությունն իրականացնել սույն որոշման 12-րդ կետի համաձայն սահմանված սանիտարական գոտու պայմանների պահպանման նկատմամբ:

19. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին՝ "Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝

1) "Արմենիան Քափըր Փրոգրամ" փակ բաժնետիրական ընկերության հետ բննարկումների արդյունքում հաստատել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ "Արմենիան Քափըր Փրոգրամ" փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին Թեղուտի հանքավայրի շահագործման համար անհրաժեշտ տարածքներում զանվող եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 29-ի N 49-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի 5.37-րդ եւ 5.38-րդ բաժիններում ընդգրկված (շուրջ 23 հեկտար ընդհանուր տարածք զբաղեցնող՝ 12 հատ), ինչպես նաեւ փաստացի առկա, սակայն նշված բաժիններում չընդգրկված՝ նորահայտ (շուրջ 10 հեկտար ընդհանուր տարածք զբաղեցնող՝ 6 հատ) հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումների իրականացման ծրագիրը եւ ժամանակացույցը:

2) սույն կետի 1-ին ենթակետի համաձայն հուշարձանների հետախուզման եւ պեղման աշխատանքների արդյունքների հիման վրա սահմանել հուշարձանների պահպանության գոտիներ ու ներկայացնել առաջարկությունն հուշարձանների տակ զանվող, ինչպես նաեւ դրանց պահպանության գոտու հողերի կատեգորիայի փոփոխության վերաբերյալ:

3) այն հուշարձանների համար, առանց որոնց տեղափոխման հնարավոր չէ Թեղուտի հանքավայրի շահագործումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել դրանց տեղափոխման վերաբերյալ առաջարկություն:

20. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարին՝

1) երկամսյա ժամկետում ապահովել Թեղուտի հանքավայրի շահագործման աշխատանքների իրականացման ընթացքում սպառվելիք էլեկտրաէներգիայի մատակարարման առավելագույն արդյունավետ սխեմայի ընտրությունն ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի համապատասխան կառույցի, "Բարձրավոլտ էլեկտրացանցեր" փակ բաժնետիրական ընկերության, "Հայաստանի էլեկտրական ցանցեր" փակ բաժնետիրական ընկերության, "Արմենիան Քափըր Փրոգրամ" փակ բաժնետիրական ընկերության եւ այլ

**ԹԵՂՈՒՏԻ ՊՐԵՍՏԱՄՈԼԻԲԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՏՐԻ ԾԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՏՐԱՄԱՂԻԼՈՒ ՄԱՍԻՆ (1-ԻՆ ՄԱՍ)**

շահագրգիռ մարմինների ու կառույցների հետ դրա համաձայնեցումը.

2) եռամսյա ժամկետում ապահովել սույն կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով ընտրված ու համապատասխան կառույցների եւ անձանց հետ համաձայնեցված էլեկտրաէներգիայի մատակարարման սխեմայի իրականացման ժամանակացույցի կազմումն ու "Արմենիան Քափրր Փրոգրամ" փակ բաժնետիրական ընկերության հետ համաձայնեցումը եւ առավելագույն աջակցություն ցուցաբերել դրա պայմանների իրականացման ընթացքում ծագող խնդիրների լուծման հարցում:

21. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին՝

1) մեկամսյա ժամկետում, սույն որոշման 14-րդ կետին համապատասխան, Շնողի եւ Թեղուտի գյուղական համայնքների ղեկավարների միջոցով ապահովել "Արմենիան Քափրր Փրոգրամ" փակ բաժնետիրական ընկերությանը հողամասերի տրամադրումը.

2) Շնողի եւ Թեղուտի գյուղական համայնքների ղեկավարների միջոցով ապահովել "Արմենիան Քափրր Փրոգրամ" փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվելիք շինարարական եւ այլ աշխատանքների համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեւակերպումները:

22. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝

1) երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 14-րդ կետի համաձայն "Արմենիան Քափրր Փրոգրամ" փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրվող 475,426 հեկտար հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը.

2) 20-օրյա ժամկետում ապահովել սույն որոշման 12-րդ կետով սահմանված հողերի նկատմամբ օգտագործման սահմանափակումների հատուկ իրավական ռեժիմի (սանիտարական գոտու) պետական գրանցումը:

23. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի եւ Թեղուտի գյուղական համայնքների ղեկավարներին՝ ապահովել հողամասերի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասերի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրանց կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան՝ մինչեւ փոփոխումը:

24. Մահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի եւ Թեղուտի գյուղական համայնքները կարող են սույն որոշման 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ կետերով սահմանված՝ համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասերն առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով՝ սույն որոշմամբ սահմանված նպատակներով օգտագործելու համար տրամադրել "Արմենիան Քափրր Փրոգրամ" փակ բաժնետիրական ընկերությանը.

2) սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցման հետ կապված աշխատանքները կատարվելու են "Արմենիան Քափրր Փրոգրամ" փակ բաժնետիրական ընկերության սեփական միջոցների հաշվին.

3) Թեղուտի հանքավայրի նկատմամբ ունեցած հանքային իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այլ անձի փոխանցելու դեպքում "Արմենիան Քափրր Փրոգրամ" փակ բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի առանց սեփականատիրոջ համաձայնության նույն անձին փոխանցելու մասել սույն որոշման 14-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն վարձակալության իրավունքով իր օգտագործմանը տրամադրված հողերի նկատմամբ օգտագործման իրավունքը:

25. Հայաստանի Հանրապետության պետական գեոդեզիական ցանցի հավասարակշռման արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների սահմանների կորրոկցիաների ժողովածուի հրատարակումից հետո հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման ժամանակ գյուղական համայնքների հողային հաշվեկշռում սահմանված կարգով կատարել համապատասխան փոփոխություններ:

26. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: